Կ. ՉՈՒԿՈՎՍԿԻ

ՀԵՌԱԽՈՍ

891.71Ս
Չ-88

1936

891.7145
Ղ-88

Կ. ԶՈՒԿՈՎՍԿԻ

ՀԵՌԱԽՈՍ

1009/4069

ՆԿԱՐՆԵՐԸ
Վ. ԿՈՆԱՇԵՎԻՉԻ

Թարգմանեց
Հ. ՏԵՐ-ԱՎԱԳՅԱՆ

ՀՍԽՀ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 1936

4017
ՀՍԽՀ-ՍՍՀ Ա.Մասիսյան

17 JUL 2013
4643

Հ Ե Ռ Ա Խ Ո Ս

Այս ամբողջ պատմությունը պատմում է բժիշկ Վայցավումենն

Զնգզնգում է հեռախոսը,
Սկսվում է հարց ու փորձը.
— Ո՞վ է խոսում։
— Փիղը։
— Վո՞ր տեղից։
— Ուղտի մոտից։
— Ի՞նչ եք ասում։
— Շոկոլադ եմ ուզում։
— Ո՞ւմ համար։
— Տղիս համար։
— Քի՞չ, շա՞տ։
— Հինգ, կամ վեց փթաչափ։
Եվ ավելի նա չի ուտի —
Իմ տղան շատ է պստիկ։

Նորից հանկարծ զանգը հնչեց,
Կոկորդիլոսն ահա կանչեց
Ու աղաչեց.
— Ի՛մ սիրելի, իմ անուշիկ,
Ուղարկիր մեզ կրկնակոշիկ —
Ինձ, կնոջս ու Տոտոշին։
— Ապա սպասիր, բա քեզ չՁը, վոր
Են մյուս շաբթին
Ուղարկեցի յերկու զույգ նոր
Ու գեղեցիկ
Կրկնակոշիկ։
— Են վոր դու իմ ընտանիքին,
Ճամբել եյիր անցյալ շաբթին,
Կերել ենք մենք վաղուց ի վեր։
Ու հիմա ել մենք անհամբեր
Սպասում ենք, վոր կուղարկես
Դյուժին ու կես
Կրկնակոշիկ քաղցր ու նոր
Մեր ընթրիքի համար այսոր։

Ապա զանգահարեցին
Նապաստակները.
— Ձեռնոց ուղարկեցեք,
Մրսում են մեր ձեռները։

Հետո զանգ տվին յերկու կապիկներ.
— Շուտ ուղարկեցեք նախշուն գրքույկներ։



Հետո արջը զանգահարեց,
Իր զոռոցով ինձ խլացրեց։
—Սպասեցեք, արջուկ,
Ի՞նչ եք զոռում,
Դե, ասացեք, արջուկ,
Ի՞նչ եք ուզում։
Իսկ նա «մու» հա «մու» յե անում,
Ի՞նչ ե ասում չեմ հասկանում։
—Խնդրեմ, կախեք խոսափողը։



Հետո զանգ տվեց ձկնկուլը մեր,
Թե՝ ուղարկեցեք դեղի կաթիլներ։
Շատ գորտ ենք կերել մեծ-մեծ ու պստիկ,
Յեվ մեր փորերը ցավում են սաստիկ։



Ու միշտ եսպես զատարկ բաներ
Որ ու գիշեր...
Զրընգ-զնգուն...
Զրընգ-զնգուն։
Զրընգ-զնգուն։
Մեկ չար կատուն
Ե զանգ տալիս, մեկ յեղջերուն։

Իսկ են որը յերկու գազել
Զանգահարել, յերգ են ասել.
— Ճիշտ ենք լսել,
Վոր ճոճանակ ու կարուսել
Կրակ ընկել
Փուլ են յեկել։
— Ի՞նչ եք դուք ել
Կրակն ընկել...
Ճոճանակն ել
Կարուսելն ել
Չեն կրակվել,
Չեն փուլ յեկել։



Դուք լավ կանեք,
Վոր չաղմկեք,
Յեվ մյուս շաբթին
Գաք միասին,
Մի լավ ճոճվեք ճոճանակով,
Լավ պտտվեք կարուսելով։

Բայց գազելներն այդ չեն լսել,
Առաջվա պես յերգ են ասել.
— Ճիշտ ենք լսել,
Վոր ճոճանակ ու կարուսել
Կրակ ընկել,
Փուլ են յեկել։
Ա՛յ, քեզ յերկու հիմար գազել։



Իսկ յերեկ իրիկուն
Կենգուրուն՝
— Լվամինչմաշվիլ
Բնակարանը չի։
Յես գոռգոռացի, սաստիկ բարկացա.
— Վոչ, ուրիշ մարդու բնակարան է սա։
— Իսկ Լվամինչմաշվին ուր է, ինձ ասեք։
— Չեմ ասի, յերբեք...
Զանգահարեցեք
Հարյուր քսան հինգ։

Յերեկ գիշեր յես չեմ քնել,
Շատ եմ հոգնել...
Ա՛յ, մի պառկեյի,
Դադար առնեյի...
Բայց դեռ չպառկած
Զանգ տվին հանկարծ։
— Ո՞վ է խոսում։
— Ոնգեղջյուրը։
— Ի՞նչ եք ասում։
— Փորձանք, փորձանք...
— Դե, շուտ հասեք։
— Ի՞նչ է յեղել։
— Վա՛յ, փրկեցեք։
— Ո՞ւմ։
— Գետաձիուն։

Խեղճ գետաձին
Ընկել է ճահիճը...
— Ընկել է ճահիճը։
— Հա՛։
Խոր է թաղվել նա։
Յեթե չգաք ոգնության
Նա կխեղդվի անպայման,
Նա կմեռնի, նա կկորչի...
Խե՜ղճ գետաձի։
— Դե լավ, դե լավ, շուտով կգամ,
Կոգնեմ, յեթե կարողանամ։

Ի՜նչ տանջանք է, ի՜նչ նեղություն,
Հանել ճահճից գետաձիուն։

Պատասխանատու խմբագիր՝ Հ. Հայրապետյան. Տեխնիկական խմբագիր՝ Տ. Խաչվանքյան.
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան. Գլավլիտի լիազոր՝ № 1096. Պատվեր № 622. Հրատարակչական № 3694. Տիրաժ 5000. Պետհրատի տպարան, Երևան, II Գնունի, № 4։

К. ЧУКОВСКИЙ — ТЕЛЕФОН — Гиз. СССР, Ереван, 1936 г. ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

Им. А. Мясникян
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎ.

«Ազգային գրադարան»
NL0398393

542

4643

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

К. ЧУКОВСКИЙ.

—ТЕЛЕФОН—

Гиз ССРА, Эривань, 1936 г.